

պել: Հետեւաբար նախնեաց «ճաշն» ալ առաջին իմաստով կը ցուցնէր որ եւ է ժամու հաց: Մանդակունին (129) եւ Ոսկերերան (Մտթ. Բ, 67) «ճաշ» կը կոչեն անապատի ժողովրդեան կերակուրը, որ կատարուեցաւ երբ «օրն տարաժամեալ» էր (Մտթ. ԺԳ, 15): Երկրորդը նոյնպէս «ճաշ» կ'անուանէ վանականաց ընթրիքը (Մտթ. Բ, 71, Թղթ. Ա, 127): Աղեքսանդրի պատմութիւնը «ճաշ» մը կը յիշէ՝ կատարուած «ընդ լինել տասն ժամ», եւ ուրիշ մը՝ «ի մետասան ժամ» (140, '41): Նեեմեայ մէջ «ճաշ» մը կայ՝ որ թարգմանութիւնն է յն. սեդանին (Ե, 17), եւ Եսթերի երկու «ճաշն» յն. գիւնարբուաց տեղ դրուած է (2, 14, Է, 7): Մեսրոբ՝ «ի ժամ ճաշոյն» Արշակայ բացատրութեամբ՝ կ'իմանայ անոր օրական բոլոր հացկերոյթները (32, 39):

Բ. Սակայն «ճաշն» իւր աւելի ամփոփ իմաստով կը նշանակէր միջօրէի կերակուրը, եւ իրաւամբ կ'ըսէ Տաթեւացին՝ թէ «կերակուրն մինչ ի 9 ժամն՝ ճաշ կոչի» (Հրց. 656): Այս մտօք Ս. Գրոց մէջ ալ կան շատ օրինակներ, (Հոթ. Բ, 14. Տոր. Բ, 1. Դան. ԺԳ, 13 եւն). եւ տեղ մը նաեւ այս յայտնի զանազանութիւնը. «Յորժամ առնիցես ճաշ կամ ըն-